

ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԸՆՏԱՆԵԱԿԱՆ ՊՈԼԻՊՈԶՈՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփում

Նպատակ

Ընտանեական պոլիպոզով ծագման ընդունված բացատրությունը – ժառանգական է, որի արդյունքում հաստ և ուղիղ աղիքում առաջանում են հարյուրավոր տարբեր տրամաչափի պոլիպներ, իրենց իսկ բնորոշ հնարավոր բարդություններով – արյունահասություն, չարորակացում [1-6]: Առավել հաճախ հանդիպում է երիտասարդ տարիքում [4, 8-12]: Ուղեցույցի նպատակն է տրամադրել ապացուցողական խորհուրդներ ժառանգական ընտանեական պոլիպոզի վարման մեթոդների վերաբերյալ և բարելավել տվյալ խմբի պացիենտների վարման ելքերը:

Մեթոդաբանություն

Ուղեցույցը կազմված և հաստատված է Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիա հասարակական կազմակերպության ստեղծված փորձագիտական հանձնաժողովի կողմից: Ուղեցույցները կազմվել են օգտագործելով հետևյալ գրականության աղբյուրները՝ Ամերիկայի հաստ և ուղիղ աղիքի վիրաբույժների միության (the Standards Practice Task Force of the American Society of Colon and Rectal Surgeon, ASCRS) 2004 թ. “Clinical Practice Guidelines for the Management of Inherited Polyposis Syndromes” հիման վրա, Ռուսաստանի կոլոպրոկտոլոգների ասոցիացիայի, European Society of Coloproctology: Սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթերում ապացույցների որակը գնահատելիս կիրառվել է Օքսֆորդի Ապացուցողական բժշկության կենտրոնի ապացույցների դասակարգումը: Ուղեցույցի ծածկույթը ներգրավում է հիվանդության բոլոր տարիքային խմբի պացիենտներին ներառյալ հղիներին և կրծքով կերակրող մայրերին: Բոլոր խորհուրդները քննարկվել և հավանության են արժանացել Հայկական կոլոպրոկտոլոգների ասոցիացիայի անդամների կողմից (արձանագրությունը կցվում է): Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործական տեղեկատվության ի հայտ գալուց: Ուղեցույցը նախատեսված է կոլոպրոկտոլոգների, վիրաբույժների, գաստրոէնտերոլոգների և առողջապահության կազմակերպիչների համար:

Արդյունքներ

Հիմնվելով վերոնշյալ ապացուցողական մեթոդաբանության վրա, Ուղեցույցում լուսաբանվել են հիվանդության սահմանումը, ախտորոշման, կլինիկական պատկերի, մոնիտորինգի, բուժման մեթոդները և ելքերի հիմնահարցերը: Սույն Ուղեցույցում տրվում է 14 ապացուցողական խորհուրդ, որոնք օգնում են կլինիկական որոշումներ կայացնելիս:

Հեղուկություններ

Ապացուցողական մոտեցումների հիման վրա տրվող խորհուրդները կօգնեն բարելավել ժառանգական ընտանեական պոլիպոզի վարման ելքերը:

Բանալի բառեր

Ապացուցողական բժշկություն, ցուցումների ուսումնասիրման, սպեղծման և գնահատման դասակարգման համակարգ, ուղեցույցներ, հասարակական աղիքի պոլիպներ, ժառանգական ընտանեական պոլիպոզ, polyps, inherited polyposis syndromes:

Պատասխանատու համակարգող

Աբրահամյան Ալեքսանդր Ֆելիքսի՝ բ.գ.թ. Կոլոպրոկտոլոգիայի ամբիոնի դոցենտ, ուսումնական մասի վարիչ, Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիայի վարչության անդամ

Աշխատանքային խմբի անդամներ

1. Մինասյան Արմեն Միքայելի, Կոլոպրոկտոլոգիայի ամբիոնի վարիչ, ԵՊԲՀ-ի պրոռեկտոր, Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիայի վարչության անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր
2. Աղավելյան Ալեքսանդր Մինասի՝ Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիայի նախագահ, բ.գ.դ., Կոլոպրոկտոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր
3. Հակոբյան Արամ Սերգեյի՝ բ.գ.դ., Կոլոպրոկտոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիայի վարչության անդամ
4. Էյնֆենջյան Արմենակ Կարպի՝ բ.գ.թ. Կոլոպրոկտոլոգիայի ամբիոնի դոցենտ, Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիայի վարչության անդամ
5. Շահնազարյան Կարեն Լևոնի՝ բ.գ.թ., Կոլոպրոկտոլոգիայի ամբիոնի ասիստենտ, Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիայի վարչության անդամ

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Պատասխանատու համակարգողը հայտարարում է շահերի բախման բացակայության վերաբերյալ:

Շնորհակալական խոսք

Հեղինակը իր երախտագիտություն է հայտնում աշխատանքային խմբի բոլոր այնդամներին, ինչպես նաև սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին

աջակցություն, խորհրդատվություն և մասնագիտական գիտելիքներ տրամադրած գործընկերներին:

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում:

Բովանդակություն

1. Նախաբան.....	4
1.1 <i>Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն.....</i>	5
2. Խորհուրդներ.....	6
3. Հետվիրահատական շրջանի վարում.....	28
4. Կանխարգելում.....	28
5. Ուղեցույցի ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ.....	28
6. Գրականություն.....	31
7. Հավելված.....	43

Հապավումներ

ՎՄ – Վստահության միջակայք

ԺԸՊ – Ժառանգական Ընտանեական Պոլիպոզ

ՊԲՎՓ՝ Պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկում

ԽԱ՝ Խորհուրդների աստիճան

ԱԻ՝ Ապացուցողական Ինդեքս

ՀՇ՝ Համակարգչային շերտագրում

ՄՌՇ՝ Մագնիս-ռեզոնանսային շերտագրում

ՈւՁՀ – Ուլտրաձայնային հետազոտություն

ACRS - (American Society of Colon and Rectal Surgeon)՝ Ամերիկայի հաստ և ուղիղ աղիքի վիրաբույժների միություն

1. Նախաբան

Հաստ աղու քաղցկեղը ԱՄՆ-ում կանանց և տղամարդկանց շրջանում երրորդն է ըստ տարածվածության, և երկրորդն է քաղցկեղից մահացության ցուցանիշով: Հաստ աղու քաղցկեղի դեպքերի մոտ 20-30%ը ունեն հաստ աղու պոլիպոզի կամ քաղցկեղի ընտանեկան պատմություն, իսկ դեպքերի 3-5% կապված են բացահայտված ժառանգական կոլոնեկտալ քաղցկեղի համախտանիշի հետ: Այս ժառանգական համախտանիշներից պոլիպոզ համախտանիշը և Լինչի համախտանիշը ամենատարածվածն են: Պոլիպոզ համախտանիշը ճանաչված է երկար տարիներ, քանի որ ունի արտահայտված ֆենոտիպ, որը ներայացված է բազում տարբեր հյուսվածքաբանական տեսակներով [7] :

Ընտանեկան ադենոմատոզ պոլիպոզը [FAP՝ familial adenomatosis polyposis] աուտոսոմ դոմինանտ համախտանիշ է, որը բնորոշվում է տասից հազարավոր ադիքային ադենոմաներով, որոնցից մեկը կամ մի քանիսը կարող են վերափոխվել քաղցկեղի՝ չբացահայտվելու և չբուժվելու դեպքում: Կա նաև այլ չարորակացումների բարձր ռիսկ՝ տասներկումատնյա աղու, ենթաստամոքսային գեղձի, վահանագեղձի, ուղեղի: Աղու ադենոմատոզ պոլիպոզ [APC՝ Adenomatous polyposis coli] ուռուցքի 5q21 քրոմոսոմի վրա տեղակայված սուպրեսոր գենի ժառանգական մուտացիան հայտնաբերվում է դասական ադենոմատոզ պոլիպոզով պացիենտների մեծ մասի մոտ [8,9]: Ախտահարված անհատները կարող են ունենալ մի շարք բարդացումներ, որոնք կախված են մուտացիայի տեղակայումից: Սա բերում է նրան որ ավելի թեթև ախտահարված անհատների մոտ զարգանում է թուլացված ընտանեկան ադենոմատոզ պոլիպոզ [AFAP՝ attenuated familial adenomatosis polyposis][10,11]: AFAP պացիենտների մի մասի մոտ ներկայումս որպես հիվանդության պատճառ ընդունվում է MutY էքսցիզիոն-ռեպարացիոն գենի հոմոլոգի [MYH՝ MutY homologue] ժառանգական մուտացիան, որը բերում է աուտոսոմ ռեցեսիվ համախտանիշի՝ MYH-կապված պոլիպոզ կամ MAP[MYH-associated polyposis][12,13]: Չնայած վերջին նվաճումներին, կան կլինիկորեն ակնհայտ պոլիպոզով անհատներ, որոնց մոտ մուտացիա

հայտնաբերված չէ: Այս կլինիկական ուղեցույցը ներառում է FAP, AFAP, MAP չբացահայտված գենոտիպով պոլիպոզի, ինչպես նաև ադենոմատոզ պոլիպոզ համախտանիշի արտադիքային դրսևորումների հայտնաբերումը և հետագա քայլերի կազմակերպումը: Համարտոմային պոլիպոզ համախտանիշները, ինչպիսիք են Պոյց-Յագերսի համախտանիշը, յուվենիլ պոլիպոզ համախտանիշը և PTEN համարտոմային ուռուցքային համախտանիշը ներկայացված չեն այստեղ:

2. Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Տվյալ ուղեցույցները կազմված են Հայկական Կոլոպրոկտոլոգների Ասոցիացիայի ստեղծված փորձագիտական հանձնաժողովի կողմից: Գրականության աղբյուրները ընտրվել են բանալի բառերի օգնությամբ 2006-2016 թթ շրջանում իրականացված համակարգային որոնման հիման վրա: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ուղեցույցերի ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն և ցանկացած խոհուրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ: Տեղայնացման/ադապտացիայի սկզբնաղբյուրներ են հանդիսացել հետևյալ շտեմարաններից գրականության և կլինիկական ուղեցույցների աղբյուրները՝ Ամերիկայի հաստ և ուղիղ աղիքի վիարբույժների միության (the Standards Practice Task Force of the American Society of Colon and Rectal Surgeon, ASCRS) 2004 թ. “Clinical Practice Guidelines for the Management of Inherited Polyposis Syndromes” վարման կլինիկական ուղեցույց հիման վրա, Ռուսաստանի կոլոպրոկտոլոգների ասոցիացիայի, European Society of Coloproctology, CochraneCollaboration, ինչպես նաև PubMed, EMBASE, Cochrane Library, National Guideline Clearinghouse և UpToDate արդի տվյալները: Համացանցում որոնումկատարելու համար օգտագործվել են հետևյալ տերմինները՝ ապացուցողական բժշկություն, ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ, ուղեցույցներ, հաստ աղիքի պոլիպներ, ժառանգական ընտանեական պոլիպոզ, polyps, inherited polyposis syndromes: Սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթերում ապացույցների որակը

գնահատելիս կիրառվել է Օբսֆորդի Ապացուցողական բժշկության կենտրոնի ապացույցների դասակարգումը: Ամերիկյան մասնագիտական միավորման փաստաթղթից վերցված խորհուրդներին հաջորդում է ACRS հապավումը:

Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել հայկական Կոլոպրոկտոլոգների միության կողմից (արձանագրությունը կցվում է): Ուղեցույցի ծածկույթը ներգրավում է ժառանգական ընտանեական պոլիպոզով բոլոր տարիքային խմբի պացիենտներին ներառյալ հղիներին և կրծքով կերակրող մայրերին: Սույն փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց: Ուղեցույցը նախատեսված է սուր պարապրոկտիտի վարման շրջանակներում ներգրավված բոլոր մասնագետների համար՝ կոլոպրոկտոլոգներ, վիրաբույժներ, գաստրոէնտերոլոգներ, ինչպես նաև առողջապահության կազմակերպիչներ:

3. Խորհուրդներ

Աղենոմապոզ պոլիպոզ համախտանիշի սկրինինգ և գենետիկական հետազոտություն

1.Պոլիպոզ համախտանիշը սովորաբար ախտորոշվում է կյանքի ընթացքում ավելի քան 20 աղենոմաներ ունեցող, անամնեզում դեսմոիդ ուռուցք կամ FAP այլ արտաղիքային դրսևորումներ ունեցող, կամ FAP, AFAP, MAP ախտորոշված ընտանիքի անդամներ ունեցող անհատների մոտ:(Խիստ խորհուրդ, ցածր որակի ապացուցողականություն, 1C):

FAP կլինիկական ախտորոշումը սովորաբար դրվում է երբ աղենոմաների քանակը 100ից ավելի է: Այս անհատներին խորհուրդ է տրվում APC գենի հետազոտություն, քանի որ դա հեշտացնում է մուտացիայի սկրինինգը ընտանիքի անդամների մոտ և ունի պրոգնոստիկ նշանակություն արտաղիքային

դրսևորումների համար: Չնայած 100ից ավել ադենոմաներ ունեցող հետազոտվողների մեծ մասի մոտ հայտնաբերվում է APC գենի մուտացիա կամ դելեցիա, կա փոքր խումբ, երբ մուտացիան չի հայտնաբերվում: Վերջերս այս ընտանիքներում հայտնաբերվել են APC 1B պրոմոտորի դելեցիաներ և դրանք կարիք ունեն հատուկ մոտեցման: Դասական FAP-ով ընտանիքում, որտեղ չկա հայտնաբերված APC գենի մուտացիա, սկրինինգը և բուժումը պետք է անցկացնել ինչպես ստուգված մուտացիաների դեպքում: 100-ից քիչ ադենոմաներ ունեցող անհատների մոտ ախտորոշումը կարող է լինել դժվարացած: ԴՆԹ հաջորդականության որոշման վերջերս արված հայտնագործությունները և մուլտիգեն պանելային հետազոտությունը թույլ են տալիս նման պացիենտներին անցնել հաստ աղու քաղցկեղի բոլոր հայտնի գեների հետազոտումը մեկ արյան անալիզի միջոցով: Դա օգտակար է քանի որ շատ համախտանիշներ կապված են թուլացած ադենոմատոզ պոլիպոզի հետ [AFAP, MAP, Լինչի սինդրոմ]:

Կլինիկական հարցը որին անհրաժեշտ է պատասխանել, դա ադենոմաների գումարային քանակի շեմն է, որի դեպքում անհրաժեշտ է անցկացնել գենետիկական հետազոտություն: Չնայած կան առաջարկված շատ կրիտերիաներ, սակայն դեռ չկա AFAP ախտորոշման վերջնական կոնսենսուս [14-16]: AFAP ախտորոշումը պահանջում է կլինիկական հետազոտությունների արդյունքների, ադենոմաների թվի [10ից կամ 20ից ավել, բայց 100ից պակաս], ընտանեկան անամնեզի և տարբերակիչ ախտորոշման համար գենետիկական հետազոտության՝ MAP, անհայտ ծագման պոլիպոզի և ուղղակի բազմակի սպորադիկ պոլիպոզի հետ, համադրում: Գոյություն ունեն մի քանի տվյալներ պոլիպների գումարային քանակի որոշման համար, որոնք պետք է հուշեն հետազոտության մասին: Myriad Genetics լաբորատորիայում 8903 անհատի ռանդոմիզացված հետազոտության տվյալները՝ ում մոտ կան նմուշներ, ներկայացված APC և MYH գեների մուտացիաների հայտնաբերման համար, հրատարակվել են 2012 թ.-ին [13]: Մուտացիաներ հայտնաբերվել են 1000-ից

ավելի պոլիպ ունեցող 82% անհատների մոտ, 63% 100ից 999 պոլիպ ունեցող, 17% 20ից 99 պոլիպ ունեցող, 9% 10ից 19 պոլիպ ունեցող անհատների մոտ: Այս տվյալները ցույց են տալիս, որ հիմնվել միայն գենետիկական հետազոտության տվյալների վրա ճիշտ չէ, կլինիկական տվյալները անհրաժեշտ են այն անհատների ախտորոշման համար, ում մոտ չկա հայտնաբերված մուտացիա: Քանի որ գենետիկական շեղում հայտնաբերելու հավանականությունը չի գերազանցում 10%ը՝ քանի դեռ չկան հայտնաբերված 20 և ավելի ադենոմաներ, խելամիտ է օգտագործել գումարային 20 ադենոմաների նմուշ գենետիկական հետազոտություն անցկացնելու նպատակով: Մենք համաձայն ենք մի քանի այլ ուղեցույցների հետ, որ գենետիկական թեսթավորումը պետք է նախորդի գենետիկական խորհրդատվությանը՝ ըստ հնարավորության անցկացված վկայագրված մասնագետի կողմից [17-19]: Պացիենտները ում մոտ չկա հայտնաբերված հայտնի մուտացիա, գնահատվում են որպես դասական կամ թուլացած պոլիպոզ՝ ֆենոտիպի վրա հիմնված:

Պոլիպոզի ընտանեկան պատմությունը օգտակար է, սակայն չի պահանջվում գենետիկական հետազոտության վերաբերյալ որոշում ընդունելիս: Ընտանեկան քաղցկեղի պատմության պարբերական, փաստերի վրա հիմնված վերազննումը նկարագրվել է Murff et al կողմից, և հաստատել է, որ բուժվող պացիենտների կողմից ներկայացված պատմությունը ճշգրիտ է և արժեքավոր՝ բուժվող պացիենտների մոտ հաստ աղու քաղցկեղի կամ կրծքագեղձի քաղցկեղի գնահատման մեջ: Հաստ աղու քաղցկեղի և պոլիպոզի ընտանեկան պատմության բացակայությունը չի բացառում պոլիպոզ ախտորոշումը, քանի որ APC գենի de novo մուտացիանները կարող են հանդիպել FAP և MAP ռեցեսիվ ժառանգված պացիենտների մոտ 15% դեպքերում [21]:

FAP-ի (Ընտանեկան ադենոմատոզ պոլիպոզի) բուժում

1.Բուժումը պետք է ներառի համախտանիշի բնույթի, պատմության, արտադիքային դրսևորումների վերաբերյալ մանրակրկիտ խորհրդատվությունը և համաձայնեցված լինի վարման և վերահսկման

խորհուրդների հետ: (Խիստ խորհուրդ, ցածր որակի ապացուցողականություն, 1C):

Դասական FAP-ի չբուժված դեպքում հաստ աղու քաղցկեղը զարգանում է 40 տարեկանին մոտ: Կան բազմաթիվ չռանդոմիզացված և պրոսպեկտիվ հետազոտություններ տարբեր վերահսկողական ստրատեգիաների վերաբերյալ: Բազմաթիվ միակենտրոն վերահսկողական հետազոտությունները և համընդհանուր համակարգային հետևումը ցուցադրում են հաստ աղու քաղցկեղով հիվանդացության և մահացության մակարդակի իջեցում սկրինինգային խմբում [21]: Այդ անձիք ունեն արտադիքային դրսևորումների ռիսկ՝ ներառյալ ստամոքսի, բարակ և տասներկուամատնյա աղու պոլիպները և քաղցկեղը, մակերիկամների ադենոմաները, վահանաձև գեղձի քաղցկեղը, դեսմոիդ ուռուցքները, հեպատոբլաստոման և ցանցաթաղանթի պիգմենտի բնածին էպիթելային հիպերտրոֆիան: Վերջերս կատարված հետազոտությունները ցուցաբերում են երկարատև վերահսկման տակ գտնվող FAPով պացիենտների մոտ ստամոքսի քաղցկեղի զարգացման հավանականության բարձրացում: Այս ոլորտում կատարվող լրացուցիչ հետազոտությունները կարող են ազդել ստամոքսի քաղցկեղի վերաբերյալ հետագա սկրինինգային ուղեցույցների մշակման հարցում [23]: Տասներկուամատնյա աղու քաղցկեղը և դեսմոիդ ուռուցքները հաստ աղու քաղցկեղից հետո FAP-ով պացիենտների մոտ ամենից հաճախ հանդիպող մահվան պատճառներն են, իսկ վերջին հետազոտությունները փաստում են, որ ստամոքսի քաղցկեղով հիվանդացության մակարդակը աճում է: Այս օրգանների վերահսկումը և ստամոքս-աղիքային ուղու հետվիրահատական կառավարումը կարևոր են: Սրանցից որոշների ռիսկը կարող է գնահատվել APC գենի երկարությամբ կոդոնների մուտացիանների տեղակայմամբ [24]: Հիմնվելով ցածր որակի ապացուցողական հետազոտությունների վրա, խորհուրդ է տրվում կլինիցիստներին, ովքեր զբաղվում են պոլիպոզով պացիենտներով, տիրապետել համապատասխան գիտելիքներին և իդեալական պայմաններում աշխատել մուլտիդիսցիպլինար թիմի կազմում: Վկայությունները, որոնք հաստատում են

համապատասխան ախտորոշումը և բուժումը, հատկապես AFAP և FAP համար, զարգանում են, և նոր արդյունքները կարող են փոփոխել բուժման մոտեցումները:

Ռիսկի խմբերի ընդանեկան սկրինինգ

1. Հայտնաբերված մուտացիայով պացիենտների ընտանիքի անդամները ենթարկվում են մուտացիայի նկատմամբ սկրինինգի: Երեխաների և գենետիկ հետազոտությունից հրաժարվող անձանց դեպքում, խորհուրդ է տրվում էնդոսկոպիկ վերահսկողությունը անցկացնել այնքան ժամանակ մինչև կիրականացվի գենետիկական հետազոտություն կամ ախտորոշումը պարզ կլինի ֆենոտիպի հիմման վրա: Առանց մուտացիայի ռիսկի խմբի անդամները պետք է ենթարկվեն մուտացիայի ինչպես միջին ռիսկի խմբի բնակչությունը: (Խիստ խորհուրդ, չափավոր որակի ապացուցողականության, 1B):

Երբ ընտանիքում առաջին անգամ ախտորոշվում է FAP-ով հիվանդ [պրոբանդ], ցուցված է գենետիկական հետազոտություն: Եթե մուտացիան հայտնաբերվում է պրոբանդի մոտ, ապա նրա բոլոր հարազատները ենթակա են սկրինինգ հետազոտության մուտացիայի վերաբերյալ: Այս գործնառնական ավելի մատչելի և արագ է, քան բազմագենային պանելային հաջորդականության որոշումը: Շատ հեղինակներ խորհուրդ են տալիս երեխաներին հետազոտել սեռական հասունացման շրջանում, քանի որ քաղցկեղը հազվադեպ է հայտնաբերվում մինչ այդ տարիքը: Հետազոտությունների արդյունքները փաստում են որ մինչև 9 տարեկան FAP-ով պացիենտների մոտ հաստ աղու քաղցկեղի զարգացման դեպքեր չեն հայտնաբերվել: Պոլիպոզով պացիենտների 5 եվրոպական ռեգիստրների ընդհանրացված տվյալների համաձայն 0,2%-ի մոտ քաղցկեղը զարգացել է մինչև 15 տարեկանը, իսկ 1,3%-ի մոտ՝ մինչև 20 [6]: 26 ռեեստրների հարցումը ցույց տվեց մինչև 17 տարեկանը ինվազիվ քաղցկեղի 1 դեպք [25]:

FAP-ի երկու առանձնահատկություն օգնում են մշակել ռացիոնալ սկրինինգային ստրատեգիաներ.

1. ուղիղ աղին համարյա միշտ ախտահարվում է դասական FAP-ի ժամանակ,

2. չնայած պոլիպները զարգանում են ավելի երիտասարդ տարիքում՝ չկան հստակ ապացույցներ, որ պոլիպից մինչև ինվազիվ քաղցկեղ պրոգրեսիվումը արագացել [26]: Դասական FAP-ով պացիենտների երեխաների մոտ, սկսած 10 տարեկանից, կարող է անցկացվել սկրինինգ հետազոտություն ճկուն սիգմոիդոսկոպի միջոցով: Պոլիպներից պետք է վերցվեն նմուշներ, քանի որ երեխաների մոտ ավշային ֆոլիկուլկները արտահայտված են, և էնդոսկոպիկ սխալմամբ կարող են գնահատվել որպես ադենոմա: Առանց ապացույցների պոլիպոզի դեպքերը պետք է անցնեն հետազոտություն ամեն 2 տարին մեկ: Հիվանդ անձանց երեխաների շրջանում, ովքեր հասուն տարիքում չեն ունենում պոլիպոզի ֆենոտիպ կամ դրական գենետիկական անալիզներ, կան որոշման հարցում առաջնորդվելու անբավարար տվյալներ: Այս դեպքում ավելի խելամիտ է ավելի ուշ պատանեական տարիքում ճկուն սիգմոիդոսկոպիան փոխարինել կոլոնոսկոպիայով և անցկացնել ամեն 2 տարին մեկ, մինչև 20 տարեկան: Եթե մինչ այդ ադենոմաներ չեն հայտաբերվում, ապա հետազոտման ինտերվալները կարող են աստիճանաբար երկարացվել: Երեխաներին, ում մոտ ճկուն սիգմոիդոսկոպիայով հայտնաբերվել են պոլիպներ, կատարվում է կոլոնոսկոպիա՝ պոլիպոզի ծանրության աստիճանը որոշելու նպատակով: Նրանք կարող են մինչև չափահաս դառնալը հետաձգեն վիրահատական միջամտությունը՝ հիմնվելով չափավոր ապացուցողական տվյալների վրա: Հետվիրահատական սկրինինգը պետք է անցկացվի համաձայն ստորև նշված ցուցումների:

Թուլացած FAP-ի սկրինինգային ծրագրերի վերաբերյալ կան ոչ լիարժեք տվյալներ: Այս մուտացիաների հետ զուգակցված հաստ աղու քաղցկեղը հանդիպում է նշանակալի քիչ, և ուղիղ աղին կարող է չախտահարվել: Երիտասարդ անհատների մոտ հաճախակի կատարվող ճկուն սիգմոիդոսկոպիան կարող է լինել ոչ ադեկվատ: AFAP-ի երկու հետազոտությունների արդյունքները ցույց չտվեցին քաղցկեղի զարգացում մինչև 20 տարեկանը, իսկ ամենաերիտասարդը հայտնաբերվել էր 24 տարեկանում

[15,27]: Հետազոտական տվյալները և փորձագիտական գնահատականը պաշտպանում են կոլոնոսկոպիայի անցկացումը 2 տարին մեկ անգամ սկսած 20 տարեկանից մինչև՝

1.պրոֆիլակտիկ վիրահատության անցկացում,

2.գենետիկական հետազոտությունը ապացուցում է ընտանեկան հայտնի մուտացիայի բացակայությունը:

Քանի որ սկրինինգը սկսվում է ավելի ուշ տարիքում քան դասական FAP-ի դեպքում, և AFAP-ի ժամանակ նկատվում է ուղիղ աղու պահպանում, ուստի կոլոնոսկոպիան գերադասելի է ճշգրիտ իդենտիֆիկացման համար, քան ճկուն սիգմոիդոսկոպիան: Բացի կլինիկական ախտորոշում հաստատումից, էնդոսկոպիկ եղանակով պոլիպների հեռացումը կարող է հետաձգել կամ վերացնել պրոֆիլակտիկ վիրահատության անհրաժեշտությունը: Հետազոտությունների տվյալները փաստում են, որ չկան հստակ սահմանված հետազոտման ինտերվալներ: Հետպոլիպեկտոմիայի գոյություն ունեցող ընդհանուր դրոյթները կարող են փոփոխվել ավելի հաճախ անցկացվող հետազոտությունների, եթե պոլիպների էնդոսկոպիկ հեռացումը համարվում է բուժման պլան, քանի որ պոլիպների քանակը կարող է արագ ավելանալ և կարող է բաց թողնվեն բարակ ադենոմաները:

FAP և AFAP վիրահատական բուժում

1.Կոլպրոկտէկտոմիան իլեոստոմայով կամ իլեո-հետանցքային բերանակցումով համարվում են ընտրության միջոց բազմաթիվ ռեկտալ ադենոմաներով պացիենտների դեպքում՝ օպտիմալ ժամկետների անհատականացումով: (Խիստ խորհուրդ, չափավոր որակի ապացուցողականության, 1B)

FAP-ով պացիենտների ստամոքս-աղիքային ուղու ստորին հատվածների բուժման նպատակը կանխարգելել քաղցկեղից մահացությունը և բարձրացնել կյանքի որակը: Դասական FAP-ով պացիենտների մոտ կոլոնոսկոպիկ եղանակով

ադենոմաների հեռացումը չի կարող բացառել քաղցկեղի զարգացումը, այդ պատճառով անհրաժեշտ է ուսկային էպիթելի հեռացումը: 2 որոշում, որոնք պետք է ընդունվեն պացիենտների մոտ՝ վիրահատության ժամկետների և տիպի վերաբերյալ: Վիրահատության ժամկետներ և ճիշտ գործելակերպ ընտրելու հարցում պետք է հաշվի առնել մի քանի գործոններ: Բացի ավանդական ցուցանիշներից, ինչպիսիք են բժշկական ուղեկցող հիվանդությունները և սննդակարգը, վիրահատության ժամկետների և բնույթի ընտրման համար անհրաժեշտ է հաշվի առնել հիվանդի ինտելեկտուալ և էմոցիոնալ զարգացվածության աստիճանը: Կան 4 վիրահատական տարբերակներ՝ ամբողջական կոլեկտոմիա իլեոտեկտալ բերանակցման [IRA] ձևավորումով, կոլպրոկտեկտոմիա հետագա իլեոանալ բերանակցման ձևավորումով [IPAA], կոլպրոկտեկտոմիա լորձաթաղանթի հեռացումով և հետագա պահեստոցով իլեոանալ բերանակցման ձևավորումով, ամբողջական կոլպրոկտեկտոմիա վերջնական իլեոստոմայի ձևավորումով:

Չկան IRA և կոլպրոկտեկտոմիան հետագա IPAA-ի հետ համեմատող ռանդոմիզացված հետազոտություններ: 12 չռանդոմիզացված հետազոտությունների մետաանալիզը ցուցադրում է յուրաքանչյուր տարբերակի անհատական արժանիքները [29]: Ընդհանուր որովայնային կոլեկտոմիային և ուղիղ աղու պահպանմանը նպաստող գործոնները ներառում են ուղիղ աղին խնայելու, շեքահատման, սեռական դիսֆունկցիայի, անպտղության բացառման ցանկությունը: Գործոնները որոնք նպաստում են կոլպրոկտեկտոմիա IPAA-ով իրականացմանը, ներառում են ուղիղ աղու քաղցկեղի առկայությունը, ուղիղ աղու պոլիպներով մեծ ծանրաբեռնվածությունը՝ 20ից ավել ադենոմա, բարձր աստիճանի դիսպլազիայով ադենոմա, լայն ադենոմա>30մմ, կամ ծանրաբեռնված ընտանեկան ֆենոտիպ՝ > 1000 ադենոմա:

Կա ադենոկարցինոմայի զարգացման քիչ հավանականություն IPAA-ից հետո՝ ներկայումս գրականությունում նշվում է երկու տասնյակ գրանցված դեպքերի մասին [30-32]: Այս դեպքերի մեծ մասը դրանք մնացորդային ուղիղաղիքային կամ անալ-անցումային հատվածի [ATZ] լորձաթաղանթի քաղցղեկն են: IPAA-ի

իրականացումը հետագա ATZ հեռացումով և պահեստոցային բերանակցման ձևավորումով ընտրության հարցը պետք է քննարկվի: Պահեստոցային բերանակցման առավելությունը հանդիսանում է ATZ հետվիրահատական ադենոմաների հաճախականության նվազումը [33]: ATZ նեոպլազմաների վերաբերյալ խոշորագույն հետազոտական տվյալները ընդգրկում են 206 պացիենտ, որոնց հետևել են 10,3 տարվա ընթացքում: Ադենոմայի զարգացման ռիսկը IPAA դեպքում 10 տարի անց կազմում է 22% լորձաթաղանթի հեռացման դեպքում և 51% կարված IPAA-ի դեպքում: 97 պացիենտների մոտ՝ էնդոսկոպիկ վերահսկողությունից ոչ պակաս քան 1տարի անց, 5 ռեեստրներից ստացված միասնական տվյալները համեմատում են կարված IPAA 35 հիվանդի լորձաթաղանթի հեռացումով 62 հիվանդի հետ [35]: Պոլիպի զարգացման ռիսկը IPAA դեպքում 7 տարի անց կազմում է 31% կարված IPAA-ից հետո և 10% լորձաթաղանթի հեռացումից հետո: Չկան ATZ քաղցկեղի դեպքերով պացիենտներ: Այս թեմայի վերաբերյալ Կոկրանյան հետզոտության ուղեցույցները հրապարակվել են 2014 թվականին, սակայն մինչ օրս չկան հրապարակված քննության տվյալներ [36]: Մի շարք հետազոտություններից ստացված լրացուցիչ, անորակ տվյալները տալիս են չհամակնոդ եզրահանգումներ քաղցկեղի պրոֆիլակտիկայի և ֆունկցիոնալ հետևանքներում մուկոզէկտոմիայի դերի մասին: Սակայն առկա ապացույցները չեն պաշտպանում ռուտինային մուկոզէկտոմիան, եթե մնացորդային ռեկտալ մանժետը չի պարունակում պոլիպներ և կարող է հետազոտվել: Պետք է իրականացվի մնացորդային ռեկտալ և ATZ լորձաթաղանթի, աղիքային գրպանիկի ամենամյա էնդոսկոպիկ հետազոտություն: Կարելի է դիտարկել վերջնական իլեոստոմայով ընդհանուր կոլպրոկտէկտոմիան այն պացիենտների համար, որոնց մոտ առկա է սֆինկտերի անբավարարություն, անկղապահություն, ուղիղ աղու դիստալ քաղցկեղ, ճառագայթում պահանջող քաղցկեղ կամ իլեոնալ պահեստոցի ֆունկցիոնալ սահմանափակումներից խուսափելու ցանկություն: Չնայած լապարասկոպիկ կոլպրոկտէկտոմիան ունի որոշակի պոտենցիալ առավելություններ ավանդական բաց վիրահատության հետ համեմատած, կա

գրանցված միայն մեկ ռանդոմիզացված հետազոտություն[բաց և լապարասկոպիկ վիրահատությունների համեմատության, ներառյալ խոցային կոլիտով և FAP պացիենտներ], որը ցույց է տալիս համադրելի արդյունքներ [37]: Լապարասկոպիկ մոտեցման անվտանգությունը և պիտանելիությունը ցուցադրող մի քանի չռանդոմիզացված հետազոտություններ չեն հանդիսանում բավարար մեթոդներից որևէ մեկը առաջնահերթ համարելու համար: Այս թեմայի շուրջ Կոկրանովյան հետազոտության արդյունքները չեն ցուցադրում նշանակալի տարբերություններ հիվանդացության, լավացման և բարդությունների վերաբերյալ, բայց հայտնում են որ կոսմետիկ արդյունքը լապարասկոպիկ մոտեցման դեպքում ավելի լավ է [38]:

2. Ամբողջական կոլեկտոմիա, հետագա իլեոռեկտալ բերանակցումի ձևավորումով, կարող է առաջարկվել հարաբերականորեն պահպանված ուղիղ աղիքով պացիենտներին, եթե բոլոր ռեկտալ ադենոմաները>5մմ, կարող են հեռացվել էնդոսկոպիկ եղանակով: (Խիստ խորհուրդ, ցածր որակի ապացուցողականության, 1C)

Մինչև վերականգնողական կոլպրոկտէկտոմիան պացիենտները սովորաբար ենթարկվում էին ամբողջական կոլեկտոմիայի՝ հետագա իլեոռեկտալ բերանակցումի ձևավորումով, ենթարկվելով ռեկտալ քաղցկեղի ռիսկի՝ իլեոստոմայից խուսափելու պատճառով: Քանի որ այսօր վերականգնողական կոլպրոկտէկտոմիան բավականին հասանելի է, ուղիղ աղու պահպանման հարցը որոշվում է ֆունկցիոնալ առանձնահատկություններից և պոլիպոզի ֆենոտիպից կախված [1,39,40]: Ամբողջական կոլեկտոմիայի ենթարկված FAP ուղիղ աղու քաղցկեղի վերաբերյալ հետազոտությունները պետք է կատարել ավելի ուշադիր, եթե պացիենտները ենթարկվել են վիրահատության մինչև վերականգնողական կոլեկտոմիայի իհայտ գալը: 4 եվրոպական կենտրոններ գնահատել են իլեոռեկտալ բերանակցումը ունեցող 776 պացիենտների, որոնցից 576 մինչև իլեոնալ պահեստոցի ներդնումը և 200 այդ տարբերակի օգտագործումից հետո [41]: Կապլան-Մեյերի անալիզի օգնությամբ հայտնաբերվել է, որ ուղիղ աղու

քաղցկեղի ռիսկը կազմում է 10% մինչև իլեռանալ պահեստոցի ներդնումը և 2% դրանից հետո: Իլեռոեկտալ բերանակցում առաջարկող ամենից հաճախ չափանիշը ուղիղ աղու պոլիպային ծանրաբեռնվածությունն է: FAP-ով 213 պացիենտների Church-ի ընտրանքային հետազոտությունում [42] ուղիղ աղի պահպանող վիրահատության ենթարկված 165 հիվանդից 128-ի մոտ պոլիպների թիվը <20 էր, իսկ 37 ի մոտ >20: Ուղիղ աղու քաղցկեղի հաճախականությունը <20 պոլիպների դեպքում 1,6% էր, >20 դեպքում 10,8%: Սինգապուրի պոլիպոզների ռեեստրի ընտրանքային հետազոտության տվյալները հաղորդում են, որ առանց ռեցեդիվներ ապրելիության ցուցանիշը չի տարբերվում իլեռոեկտալ բերանակցումի օգտագործումից՝ հետագա 98 ամիսների վերահսկողությունից հետո: Քիչ հավանական է որ կանցկացվի հետազոտություն, որը կհամեմատի իլեռոեկտալ և իլեռանալ բերանակցումի ֆունկցիոնալ և ուռուցքաբանական արդյունքները, քանի որ մարդկանց մեծ մասը, ում մոտ կարող էր իրականացվել իլեռոեկտալ բերանակցումը նախընտրում են ուղիղ աղի պահպանող վիրահատություն: Ամեն դեպքում հետազոտության տվյալները հաստատում են ուղիղ աղու հեռացման ֆունկցիոնալ առավելությունը՝ ներառյալ անկղապահության, միզային և սեռական դիսֆունկցիայի իջեցումը, ինչպես նաև միափուլ վիրահատության և իլեոստոմայից խուսափելու մեծ հավանականությունը: Օգտագործելով ուղիղ աղի պահպանող վիրահատության ընթացիկ հետազոտության չափանիշները՝ ավելի հաճախ 20-ից քիչ ադենոմաներ, իլեռոեկտալ բերանակցումը ունի այդ հետազոտությունների հավանությունը: Պահանջվում է ուղիղ աղու ամենամյա վերահսկողություն: Ցելեկօքսիբի և սուլինդակի օգտագործմամբ քիմապրոֆիլակտիկան կարող է քննարկվել հետազոտությունների հիմման վրա, որոնք ցույց են տալիս առավելությունները 12-մատնյա աղու ադենոմայի բուժման մեջ:

MYH –սոնգացված պոլիպոզ

1. MAP-ի ախտորոշումը պետք է ի նկատի ունենալ այն պացիենտների մոտ, ովքեր ունեն կոլոռեկտալ պոլիպոզ (>20 կյանքի ընթացքում): (Խիստ խորհուրդ, ցածր որակի ապացուցողականության, 1C):

MAP-ը առտոսում ռեցեսիվ ժառանգվող կոլոռեկտալ պոլիպոզի ախտանիշ է, առաջացած երկալլել սաղմնային մուտացիայից, MYH գենի հիմնական բացակայության ժամանակ, որը տեղակայված է քրոմոսոմ 1-ում [13]: Քանի որ առտոսում ռեցեսիվ ժառանգումը պահանջում է, որ ախտահարված անձինք ունենան երկալլել մուտացիա, նրանց ծնողներից երկուսն էլ պետք է լինեն նվազագույնը միալլել կրողներ: Եթե այդպես է, ապա ախտահարված անձնանց քույրերը և եղբայրները ունենում են երկալլել մուտացիայի 25% հավանականություն և ախտահարված անձանց երեխաները կլինեն հետերոզիգոտ: Պարզ չէ միալլել մուտացիայով անձինք ունեն արդյոք կոլոռեկտալ նեոպլազիայի բարձր ռիսկ թե ոչ [43,44]: Եվրոպական բազմակենտրոն ուսումնասիրությունների հսկված դեպքերի ուսումնասիրությունը հաշվարկված պոպուլյացայում բացահայտել է կոլոռեկտալ քաղցկեղի ստանդարտացված մակարդակը 2.12 [45]: Քանի որ ներկայացված աճը մոտավորապես նույնն է կամ ավելի ցածր է քան առաջին կարգի ազգականների համար սպորադիկ կոլոռեկտալ քաղցկեղի ժամանակ ներկայացված ավելացված ռիսկը, այս անձինք պետք է հետազոտվեն նույն կերպ ինչպես մարդիկ, ովքեր ունեն առաջին կարգի մեկ ախտահարված հարազատի դեպք: Պոպուլյացիայում արված ընտրանքային հետազոտությունները տրամադրում են ամենալավ համշվարկը միալլել MYH մուտացիաների տարածվածության մասին, ենթադրաբար բնակչության 0.7-1%-ը [44,46-49]: Պոլիպների քանակը կարող է չհամընկնել երկալլել MYH մուտացիաների տարածվածության հետ, ինչպես APC մուտացիաների դեպքում, դժվար դարձնելով MAP-ի համար հետազոտությունների հանձնարարումը՝ հիմնված պոլիպների հատուկ քանակի վրա: Չնայած մի շարք զեկույցներ մեջբերում են 10 պոլիպների շեմը որպես գենետիկական թեստի ցուցիչ, Քաղցկեղի Ազգային Համապարփակ ուղեցույցները հասել են 20 պոլիպների շեմին [2-6,13,47,50]: Մինչդեռ ընդունելով սահմանափակ փաստերը, որոնք աջակցում են պոլիպների հատուկ քանակի հեռացումը, պետք է հաշվի առնել, որ MAP-ի համար արվող գենետիկական թեստը պետք է կատարվի կյանքի

ընթացքում >20 պոլիպների առկայության դեպքում: Քանի որ գենետիկական թեստերի մեծ մասն այսօր արվում է բազմագեն պանելներում, հիվանդերը որոնք հետազոտվել են հաստ աղիքային պոլիպոզ ախտանիշի համար, հավանական է որ ունեն APC և MYH սկզբանական գենետիկական գնահատման ժամանակ:

2. Երկալլել MYH մուտացիայով պացիենտները տարեկան կոլոնոսկոպիայի և պոլիպեկտոմիայի կարիք ունեն, այնքան ժամանակ մինչև աղենոման կարող է հսկվել էնդոսկոպիկ եղանակով: Ախտահարված անձի քույր-եղբայրները և երեխաները կարիք ունեն հետազոտվելու MYH-ում ընտանեկան մուտացիայի համար: Նրանք ովքեր չեն թեստվորվել, պետք է անցնեն կոլոնոսկոպիկ հետազոտություն ամեն 2 տարին մեկ՝ սկսած 20 տարեկանից (Թույլ խորհուրդ, չափավոր որակի ապացուցողականության 2B):

Հիմնականում, կոլոռեկտալ MAP ֆենոտիպը նմանվում է թուլացված FAP-ին: Բայց երկալլել մուտացիայով անձինք կարող են հանդես գալ ակնհայտ սպորադիկ քաղցկեղով, որպես երիտասարդ տարիքի քաղցկեղ կամ նույնիսկ նմանվելով Լինչի ախտանիշին: Կոլոռեկտալ քաղցկեղի միջին տարիքը MAP-ով պացիենտների մոտ 47 տարեկանն է [տարիքը տատանվում է 29-72 տարիքային խմբերում] [51-55]: MYH-ի մուտացիայով պայմանավորված կոլոռեկտալ քաղցկեղը մինչև 30 տարեկանը հազվադեպ է դիտվում, ավելի ցածր քանակի պոլիպների պատճառով հնարավոր է պոլիպների էնդոսկոպիկ մաքրումը որոշ պացիենտների մոտ: Ուղիղ աղիքային քաղցկեղը հազվադեպ է MAP-ում: Պոպուլյացիայում իրականացված կոլոռեկտալ քաղցկեղով 9268 պացիենտների շրջանում անցկացված հետազոտությունը պարզել է երկալլել MYH մուտացիայով 27 հիվանդի, ովքեր ունեցել են ուղիղ աղիքի քաղցկեղի սպասվածից ավելի քիչ աստիճան համեմատած սպորադիկ դեպքերի հետ [56]: Նիդերլանդներում կատարված արձանագրությունների հիման վրա արված կոհորտային հետազոտությունը ապացուցել է, որ MAP-ասոցացված քաղցկեղների 62%-ը տեղակայվում են պրոքսիմալ հատվածից դեպի փայծախային ծունկը [52]: MAP-ով պացիենտների մոտ արագացված աղենոմատոզ-կարցինոմայի աճի պատճառով երկալլել MYH մուտացիայով պացիենտները և նրանց քույր-

եղբայրները ովքեր թեստավորված չեն, պետք է ամեն տարի անցնեն կոլոնոսկոպիկ հետազոտություն սկսած 20 տարեկանից [52]: Ճկուն սիգմոիդոսկոպիան ընդունված չէ սքրինինգի համար, հաստ աղիքի պրոքսիմալ քաղցկեղի բարձր հաճախականության պատճառով:

3.Երկալլել MYH մուտացիայով պացիենտների վիրահատության ժամանակացույցն ու տեսակը կախված է պոլիպների մաքրման կարողությունից, ուղիղ աղիքի պոլիպների քանակի և մալիգնիզացիայի առկայությունից: (Թույլ խորհուրդ, ցածր որակի ապացուցողականության, 2C)

Երկալլել MYH մուտացիայի շրջանակում կյանքի ընթացքում կոլոռեկտալ քաղցկեղի առաջացման ռիսկը քիչ է հստակեցված, բայց պոպուլյացիայում արված հետազոտությունով հաշվարկվել է կոլոռեկտալ քաղցկեղի 28 անգամ զարգացող ռիսկ, ընդհանուր պոպուլյացիայի համեմատությամբ հաշվարկված առաջացումը (կոլոռեկտալ քաղցկեղի առաջացումը) 50տ - 19%, 60 - 43%, 80-80% [56]: Չկան բավարար տվյալներ յուրահատուկ վիրահատական եղանակ խորհուրդ տալու բոլոր պացիենտների համար և MAP ֆենոտիպը տարբերվում է այնքան, որ ստանդարտ վիրահատությունը սահմանելը սխալ է: Գրանցամատյանների ռետրոսպեկտիվ վերանայումը, որը ներառում է 2 նույն ընտանիքի պատկանող քաղցկեղները, բացահայտել են 14 պացիենտների մոտ: Մեկին կատարվել էր կոլպրոկտեկտոմիա ծանր պոլիպոզի համար, 2-ն կոլպրոկտեկտոմիա ուղիղ աղիքի քաղցկեղի և պոլիպոզի համար և 11ն կոլեկտոմիա բարակաղիք-ուղիղաղիքային բերանակցումով: Բոլոր պացիենտները հսկվում էին տարեկան պրոկտոսկոպիայով, առնվազն 5 տարի տևողությամբ (2-23տ շրջանում) և ոչ մի հիվանդի մոտ չի զարգացել ռեկտալ քաղցկեղ: Չնայած պոլիպները հազվադեպ էին գտնվում միջինը 1.52 ադենոմա տարի/հիվանդ, նրանք բոլորն էլ հաջողությամբ հսկվում էին էնդոսկոպիկ մասնահատմամբ: Կոլոռեկտալ քաղցկեղը պետք է բուժվի օնկոլոգիական սկբունքներին համաձայն՝ կանխարգելման նպատակով դեպքից դեպք արված լայնածավալ մասնահատումներով: MAP-ով և ուղիղ աղիքային խնայողական վիրահատությունով պացիենտներին առաջարկվում է կոլեկտոմիա՝ բարակաղիք-

ուղիղաղիքային բերանակցումով [57,58]: Բարձր պոլիպային ծանրաբեռնվածության դեպքում, երկարատև հաստաղիքային էնդոսկոպիկ հսկողությունը, ընդհանուր առմամբ, հաջող չէ, բայց կարող է ընտրված դեպքերում ցածր պոլիպային ծանրաբեռնվածության դեպքում դիտարկվել [59]:

Արտաաղիքային դրսևորումներ

12-մատնյա աղու նորագոյացությունների սկրինինգ

1. FAP-ով և AFAP-ով պացիենտների 12-մատնյա աղու ադենոմաների սկրինինգը պետք է սկսվի տարրական էզոֆագոդուոդենոսկոպիայից, 20 - 25 տարեկանից սկսած, հետագա հետազոտություններով՝ կախված էնդոսկոպիայի պատասխաններից: (Խիստ խորհուրդ, չափավոր որակի ապացուցողականության, 1B)

Երեք պրոսպեկտիվ և բազմաթիվ ռետրոսպեկտիվ հետազոտություններ օժանդակում են 12-մատնյա աղու սկրինինգին՝ 12-մատնյա աղու պոլիպոզը հայտնաբերելու նպատակով [60-62]: Երկտարյա վերին էնդոսկոպիայի օգնությամբ սկրինինգի ենթարկված 368 FAP-ով պացիենտների եվրոպական բազմանացիոնալ պրոսպեկտիվ հետազոտություն ցույց տվեց, որ 12-մատնյա աղու ադենոմայի գումարային հաճախականությունը 70 տարեկանում կազմում է 90%, իսկ 12-մատնյա աղու քաղցկեղի հաճախականությունը 4,5% [60]: Չնայած դա 100-300 անգամ բարձր է քան ընդհանուր պոպուլյացիայում, ցածր բացարձակ հիվանդացությունը և ադենոմայից մինչև կարցինոմա ընկած երկար ժամանակահատվածը դժվարեցնում են հետազոտությունների մշակումը, որոնք ցույց կտան էնդոսկոպիկ սկրինինգի հիմման վրա քաղցկեղով հիվանդացության իջեցումը: 12-մատնյա աղու քաղցկեղը հազվադեպ է հանդիպում մինչև 30 տարեկանը, և սիմպտոմների բացակայության դեպքում, սկրինինգը կարող է սկսվել 20-25 տարեկանում: Քաղցկեղի զարգացման Սպիգելմանի դասակարգումը հիմնված է պոլիպների թվի, չափերի, հիստոլոգիայի և

դիսպլազիայի աստիճանի վրա [Աղյուսակ 2,3] [63]: Չնայած նրան, որ ընտրողական պոլիպեկտոմիա/ամպոլեկտոմիայով վերահսկումը իջեցնում է ըստ Սպիգելմանը միավորները, կասկածի տակ է դրվում էնդոսկոպիկ պոլիպեկտոմիայի դերը քաղցկեղի կանխարգելման մեջ: 10 տարվա ընթացքում պրոսպեկտիվ հետահսկվող 114 հոգանող ընտրանքի հետազոտությունը ցուրց տվեց, որ 114-ից 6-ի մոտ [5.2%] զարգացել է քաղցկեղ, սակայն այն պացիենտները, ովքեր ունեին ավելի զարգացած պոլիպներ [Սպիգելման IV]՝ 11-ից 4-ի մոտ [38%] զարգացավ քաղցկեղ: Սա խոսում է այն մասին որ էնդոսկոպիկ բուժում կարելի է անցկացնել Սպիգելման I-III աստիճանի դեպքում, իսկ դուոդենեկտոմիայի մասին մտածում են Սպիգելման IV աստիճանով պացիենտների դեպքում [64]: FAP-ով պացիենտների պրոսպեկտիվ ընտրանքային էնդոսկոպիկ մոտեցմամբ իրականացված Տորոնտոյի էնդոսկոպիկ վերահսկման ծրագիրը ցույց տվեց, որ ուռուցքի զարգացումը եղել է դանդաղ՝ միջինը 15 տարի սկզբնական էնդոսկոպիայից հետո, և հանդիպել է 167 պացիենտներից 6ի մոտ [3%] [65]: Չնայած սկրինինգը հարմար է հիվանդության վաղ ախտորոշման և զարգացման դանդաղեցման համար, մնում է անհայտ, արդյոք հնարավոր է 12-մատնյա աղու քաղցկեղի բոլոր դեպքերի էնդոսկոպիկ կանխարգելումը: Սկրինինգի սկսելու օպտիմալ տարիքը հիմնված է կոնսենսուսային կարծիքի վրա, իսկ հետագա էնդոսկոպիաների կատարման հնտերվալը կախված է ՍԱՏի վերին հատվածների առաջնային էզոֆագեդուոդենոսկոպիայի արդյունքներից: Եղած ապացույցները ընդունում են էՖԳԴՍ 5 տարին մեկ նորմալ արդյունքներից հետո, 2-3 տարին մեկ Սպիգելման I, 1-2 տարին մեկ Սպիգելման II, 6-12 ամիսը մեկ Սպիգելման III աստիճանի համար: Սպիգելման IV պացիենտների դեպքում անհրաժեշտ է էնդոսկոպիկ հետազոտության և վիրահատական եղանակի մասին մուլտիդիսցիպլինար խմբի կողմից անհատականացված որոշումների ընդունումը:

Աղյուսակ 2.Սպիգելմանի դասակարգում.Դուոդոնալ ադենոմատոզի

դասակարգման կառուցվածք

Պոլիպ	1 միավոր	2միավոր	3միավոր
Քանակը	<4	5-20	>20
Չափը	0-4մմ	4-10մմ	>10մմ
Հիստոլոգիա	Տուբուլյար	Թարթչատուբուլյար	Թարթչային
Դիսպլազիա	Թույլ	Չափավոր	Խիստ

Աղյուսակ 3. Սպիգելմանի դասակարգում. Դուոդենալ հետազոտման

հաճախականություն

Սպիգելմանի դաս	Գումարային միավորներ	Հետազոտման հաճախականություն
0	0	Ամեն 4 տարին
I	≤4	Ամեն 2-3 տարին
II	5-6	Ամեն 1-3 տարին
III	7-8	Ամեն 6-12 ամիս
IV	9-12	Մասնագիտացված ստուգում 3-6 ամիսը մեկ Վիրաբուժական գնահատում Ամբողջական մուկոզէկտոմիա կամ դուոդենէկտոմիա կամ Whipple միջամտություն, եթե ընդգրկվել է դուոդենալ պտկիկը

Վահանաձև գեղձի հիվանդությունների սկրինինգ

1. Բացի ֆիզիկալ զննումից FAP-ով պացիենտների՝ հատկապես կանանց մոտ, անհրաժեշտ է անցկացնել վահանաձև գեղձի հիվանդությունների սկրինինգ ուլտրաձայնով: (Թույլ խորհուրդ, ցածր որակի ապացուցողականության, 2C)

Վահանաձև գեղձի քաղցկեղը հանդիպում է FAP-ով պացիենտների՝ հիմնականում կանանց, մոտ 1%ից - 2% դեպքերում, համեմատած ընդհանուր պոպուլացիայի 0,2%ի հետ [67-73]: Չկան ֆիզիկալ զննման և ուլտրաձայնի միջոցով սկրինինգի մոտեցման վերաբերյալ արված պրոսպեկտիվ հետազոտություններ: FAP-ով 192 պացիենտների ունիվերսալ հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ 72-ի մոտ [38%] հայտնաբերվել է վահանագեղձի հանգույց, իսկ 5-ի մոտ [2.6%] վահանագեղձի քաղցկեղ [74]: Հետագա հետազոտությունները ցույց են տվել, որ սկրինինգը օգնում է ավելի քիչ քանակով դրական լիմֆատիկ հանգույցների ընդգրկումով փոքր ուռուցքների բացահայտմանը [75]: 50 պացիենտների՝ ում անցկացվում էր ուլտրաձայնային քննություն, ունիվերսալ սկրինինգի արդյունքում՝ 7-ի մոտ [14%] կատարվել է բարակասեղային ասպիրացիա և 2-ի մոտ [4%] հայտնաբերվել է վահանագեղձի պապիլյար քաղցկեղ [76]: Հիմնված լինելով վահանագեղձի քաղցկեղի բարձր ռիսկի վրա՝ սկրինինգը պետք է քննարկվի պացիենտների՝ հատկապես կանանց, համար: Լրացուցիչ տվյալները անհրաժեշտ են սկրինինգը սկսելու տարիքը և հետազոտությունների ինտերվալը որոշելու համար:

MAP արտադիքային դրսևորումները

1.ՍԱՏ վերին հատվածների էնդոսկոպիան խորհուրդ է տրվում պացիենտներին՝ սկսած 30 տարեկանից: Հետազոտությունների հետագա ինտերվալը հիմնված է էնդոսկոպիայով ստացված արդյունքների վրա: (Թույլ խորհուրդ, ցածր որակի ապացուցողականության, 2C)

MAP արտադիքային դրսևորումները ներառում են 12-մատնյա աղու և այլ աղիների քաղցկեղի, ինչպես նաև արտադիքային նեոպլազիաների զարգացման

